



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՆԹԵՂ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ԱՈՒՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏԱԵԱՐ

ԿԻՐԱԿԻ, 6 Սեպտեմբեր 2020

179

DIMANCHE, 6 *Septembre* 2020



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Դ ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

Soln ծննդեան Արքուհոյ Կուսին Մարիամու յԱննայէ
Բարեկենդան Ս. Խաչի Պահոց

4^{ÈME} DIMANCHE APRÈS L'ASSOMPTION

Fête de la naissance de la Ste Vierge Marie, issue de Ste Anne
Prémices du Jeûne de la Ste Croix

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԵ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ
ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԵՆ

(7.4-16)

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԵՆ

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

(7.31-37)

Les lectures de la Bible d'aujourd'hui

2 CORINTHIENS 7.4-16

MARC 7.31-37

Պատարագիչ եւ քարոզիչ` / Celebrant

ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան ժամերգութիւն - 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ- ուղիղ սփռում - 10:30-ին

La Sainte Messe – En direct à 10h30

Հոգեհանգիստ ժամը - ուղիղ սփռում 12:00-ին

Requiem - En direct à 12h00

DIACRES – ACOLYTES

Organiste: Mme Houry Bedrossian

Chœur "Gomidas"

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

**LES LECTURES
DE DIMANCHE**



**THE SUNDAY
READINGS**

2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 7.4-16

4Մեծ է խօսքի համարձակութիւնս ձեզի հանդէպ, մեծ է ձեզմով պարծանքս, լեցուած եմ մխիթարութեամբ, չափազանց ուրախ եմ մեր ամբողջ տառապանքին մէջ:

5Որովհետեւ՝ երբ մենք Մակեդոնիա հասանք՝ մեր մարմինը բնա՛ւ անդորրութիւն չունեցաւ, այլ ամէն կողմէ կը տառապէինք. դուրսէն կռիւներ կային, իսկ ներսէն՝ վախեր: 6Բայց Աստուած, որ խոնարհները կը մխիթարէ, մեզ մխիթարեց Տիտոսի գալուստով: 7Եւ ո՛չ միայն անոր գալուստով, այլ նաեւ այն մխիթարութեամբ՝ որով ինք մխիթարուած էր ձեզմով, երբ պատմեց մեզի ձեր տենչանքը, ձեր կոծը, ինծի հանդէպ ձեր ունեցած նախանձախնդրութիւնը, այնպէս որ ա՛լ աւելի ուրախացայ: 8Որովհետեւ, թէպէտ տրտմեցուցի ձեզ այդ նամակով, չեմ զղջար, (թէպէտ զղջացեր էի,) քանի որ կը նշմարեմ թէ այդ նամակը տրտմեցուց ձեզ, թէպէտ միայն ժամանակ մը: 9Ուրեմն կ'ուրախանամ, ո՛չ թէ քանի որ տրտմեցաք, հապա՛ որովհետեւ տրտմեցաք ապաշխարութեա՛ն համար. քանի որ տրտմեցաք Աստուծոյ ուզած կերպով, որպէսզի ոչինչ կորսնցուցած ըլլաք մեր միջոցով: 10Վրդարեւ Աստուծոյ ուզած տրտմութիւնը կը պատճառէ՝ ապաշխարութիւն՝ փրկութեան համար, որ չի զղջացներ. բայց աշխարհի տրտմութիւնը կը պատճառէ մահ: 11Քանի դուք տրտմեցաք Աստուծոյ ուզած կերպով, ահա՛ այդ քանը ձեր մէջ ի՛նչ փութաջանութիւն գոյացուց, նոյնիսկ ջատագովութիւն, ընդվզում, վախ, տենչանք, նախանձախնդրութիւն, վրէժխնդրութիւն. ամէն կերպով դուք ձեզի հաւանութիւն տուիք թէ այդ խնդիրին մէջ անկեղծ էք: 12Ուրեմն ինչ որ գրեցի ձեզի, ո՛չ թէ անիրաւութիւնը ընողին պատճառով էր, եւ

ո՛չ ալ անիրաւութիւնը կրողին պատճառով, հապա՝ որպէսզի երեւնայ ձեզի Աստուծոյ առջեւ մեր ունեցած փութաջանութիւնը ձեզի հանդէպ: 13Ուստի ձեր մխիթարութեամբ մե՛նք մխիթարուեցանք. եւ ա՛լ աւելի ուրախացանք Տիտոսի ուրախութեան համար, որովհետեւ անոր հոգին հանգստացած էր բոլորէդ. 14քանի որ ամօթահար չեմ ըլլար՝ ձեզմով որեւէ բանի մէջ պարծենալու համար անոր առջեւ. հապա, ինչպէս ամէն բան ճշմարտութեամբ խօսեցանք ձեզի, նոյնպէս Տիտոսի առջեւ մեր պարծանքն ալ ճշմարիտ գտնուեցաւ: 15Նաեւ իր գորովը աւելի առատ է ձեզի հանդէպ, մինչ կը վերոյիշէ ձեր բոլորին հնազանդութիւնը, թէ ի՛նչպէս ահով ու դողով ընդունեցիք զինք: 16Ուստի կ'ուրախանամ որ ամէն բանի մէջ վստահութիւն ունիմ ձեր վրայ:

ՎԻՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 7.31-37

31Դարձեալ Տիրոսի եւ Սիդոնի հողամասերէն մեկնելով՝ գնաց Գալիլէայի ծովեզերքը, Դեկապոլիսի հողամասին մէջէն: 32Մէկը բերին անոր առջեւ, խուլ ու դժուարախօս, եւ կ'աղաչէին՝ որ ձեռք դնէ անոր վրայ: 33Բազմութենէն մեկոյի առնելով զայն՝ իր մատները մխեց անոր ականջներուն մէջ ու թքնեց, եւ դպաւ անոր լեզուին. 34ապա երկինք նայելով՝ հառաչեց ու ըսաւ անոր. «Եփփաթա՛», (որ ըսել է՝ բացուէ՛.) 35Իսկոյն բացուեցան անոր ականջները եւ քակուեցաւ անոր լեզուին կապը, ու շիտակ կը խօսէր: 36Պատուիրեց անոնց՝ որ ո՛չ մէկուն ըսեն. սակայն ինք ո՛րքան կը պատուիրէր անոնց, անոնք ա՛լ աւելի կը հրապարակէին: 37Չափազանց կ'ապշէին ու կ'ըսէին. «Ան ամէն ինչ լաւ կ'ընէ. խուլներուն լսել կու տայ, եւ համրերուն՝ խօսիլ»:

2 Corinthiens 7.4-16

4J'ai une grande liberté envers vous, j'ai grand sujet de me glorifier de vous; je suis rempli de consolation, je suis plein de joie dans toute notre affliction. 5Car après être venus en Macédoine, notre chair n'a eu aucun relâche, mais nous avons été affligés en toutes manières; [ayant eu] des combats au dehors, et des craintes au dedans. 6Mais Dieu qui console les abattus, nous a consolés par la venue de Tite. 7Et non seulement par sa venue, mais aussi par

la consolation qu'il a reçue de vous; car il nous a raconté votre grand désir, vos larmes, votre affection ardente envers moi; de sorte que je m'en suis extrêmement réjoui. 8Car bien que je vous aie attristés par mon Epître, je ne m'en repens point, quoique je m'en fusse [déjà] repenti, parce que je vois que si cette Epître vous a affligés, ce n'a été que pour peu de temps. 9Je me réjouis [donc] maintenant, non de ce que vous avez été affligés, mais de ce que vous avez été attristés à repentance; car vous avez été attristés selon Dieu, de sorte que vous n'avez reçu aucun dommage de notre part. 10Puisque la tristesse qui est selon Dieu, produit une repentance à salut, dont on ne se repent jamais; mais la tristesse de ce monde produit la mort. 11Car voici, cela même que vous avez été attristés selon Dieu, quel soin n'a-t-il pas produit en vous? quelle satisfaction? quelle indignation? quelle crainte? quel grand désir? quel zèle? quelle vengeance ? vous vous êtes montrés de toutes manières purs dans cette affaire. 12Quoi que je vous aie donc écrit, ce n'a point été à cause de celui qui a commis la faute, ni à cause de celui envers qui elle a été commise, mais pour faire voir parmi vous le soin que j'ai de vous devant Dieu. 13C'est pourquoi nous avons été consolés de ce que vous avez fait pour notre consolation; mais nous nous sommes encore plus réjouis de la joie qu'a eu Tite, en ce que son esprit a été recréé par vous tous. 14Parce que si en quelque chose je me suis glorifié de vous dans ce que je lui en [ai dit], je n'en ai point eu de confusion; mais comme nous vous avons dit toutes choses selon la vérité, ainsi ce dont je m'étais glorifié [de vous dans ce que j'en ai dit] à Tite, s'est trouvé être la vérité même. 15C'est pourquoi quand il se souvient de l'obéissance de vous tous, et comment vous l'avez reçu avec crainte et tremblement; son affection pour vous en est beaucoup plus grande. 16Je me réjouis donc de ce qu'en toutes choses je me puis assurer de vous.

Marc 7.31-37

31Puis [Jésus] étant encore parti des frontières de Tyr et de Sidon, il vint à la mer de Galilée par le milieu du pays de Décapolis. 32Et on lui amena un sourd qui avait la parole empêchée, et on le pria de poser les mains sur lui. 33Et [Jésus] l'ayant tiré à part, hors de la foule, lui mit les doigts dans les oreilles; et ayant craché, lui toucha la langue. 34Puis regardant

vers le ciel, il soupira, et lui dit : Ephphatha, c'est-à-dire, Ouvre-toi. 35Et aussitôt ses oreilles s'ouvrirent, et le lien de sa langue se délia, et il parla aisément. 36Et [Jésus] leur commanda de ne [le] dire à personne; mais plus il le défendait, plus ils le publiaient. 37Et ils en étaient extrêmement étonnés, disant : il a tout bien fait; il fait ouïr les sourds, et parler les muets.



Հոգեւոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ . Ամէն:

«Ան պատասխանեց անոնց եւ ըսաւ: Դո՛ւք տուէք անոնց ուտելիքը» (Մարկոս. 2 37):

Ահաւասիկ պատասխանը մեր Տէր Յիսուս Քրիստոսին, երբ աշակերտները առաջարկեցին Յիսուսի՝ որպէսզի արձակէ ժողովուրդը՝ շրջակայ գիւղերը երթան եւ իրենց համար ուտելիք հաց ապահովեն:

Արդարեւ, հացը մարդուն ամենակարեւոր տարրն է՝ իր կեանքը պահպանելու եւ տեւողութիւնը երկարած գելու համար:

Աւետարանիչին վկայած «հացի բազմացման իրողութիւն»ը, առաջին ակնարկով, մարդու անկարելի եւ անիրականաւի կը թուի: Թերեւս զգայապատրասք մը՝ ցնո՛րք մը:

Անիկա հրա՛շք մըն է, եւ մարդկային միտքով, մարմնական աչքով տեսնել ու բացատրել կարելի չէ, քանի որ անիմանալի, անբացատրելի ըլլալուն համար հրա՛շք է, ապա թէ ոչ՝ անիկա «հրաշք» պիտի չ'անուանուեր: Կարգ մը երեւոյթներ, մասամբ հասկնալու համար պէտք է դիտուի հաւատքի աչքով՝ հոգեւոր նայուածքով, որպէսզի մարդ համոզուի անոր «հրա՛շք» նկարագրին:

Ուրեմն «հացի բազմացման իրողութիւն»ն ալ, գոնէ մասամբ հասկնալու համար ջանանք դիտել հոգիի աչքով եւ փորձենք զայն տեսնել իր «հրաշք» հանգամանքով: Եւ այն ատեն պիտի համոզուինք, որ անիկա երբեք «ցնորք» մը, զգայախաբեութիւն մը չէ՛, այլ՝ իրականութիւն՝ որ կ'անուանուի «հրա՛շք»:

Այո, իրապէս անիկա «անկարելի» կը թուի մարմնաւոր աչքով դիտողներուն համար, քանի որ ինչպէ՛ս կարելի է հինգ հացով հինգ հազար հոգի կերակրել՝ օրհնելով հացերը: Եւ աւելին կա՛յ՝ այդ «բազմացած հինգ հաց»ը հինգ հազար հոգի ուտելէ ետք, տակաւին աւելցաւ, ինչպէս կը վկայէ Աւետարանիչը. « Եւ տասներկու սակառ կտորտանքներով լեցուն վերցուցին, ինչպէս նաեւ՝ ձուկերէն: Եւ անոնք, որ կերան, մօտ հինգ հազար հոգի էին. (Մարկոս 2 43:44): Սովորական կեանքի փորձառութեամբ բացատրել եւ հասկնալ՝ իրապէ՛ս շատ դժուար է...:



Ինչպէս ըսինք, «հացի բազմացում»ը Յիսուս Զրիստոսի կատարած բազմաթիւ հրաշքներէն մի՛ն է, սակայն կը տարբերուի այն պարզ հանգամանքով, որ հրաշագործեց առանց ունենալու նախանիւթ մը:

Յիսուս, այս հրաշքը կատարելէ առաջ արդէն բժշկած էր հիւանդներ, անդամալոյծներ, բժշկած էր նաեւ՝ կոյրերու աչքը եւ բացած էր համրի լեզուն: Եւ դարձեալ բժշկած եւ վերա-

Կենդանացուցած էր հարիւրապետին ծառան եւ իշխանա-
ւորին աղջիկը:

Բայց, հակառակ այս բոլոր
հրաշքներուն՝ տակաւին թէ՛ ա-
ռաքեալներու եւ թէ՛ ժողովուրդին
համար պարզ եւ յայտնի չէր, թէ
ո՛վ էր Յիսուս Զրիստոս: Այս իսկ
պատճառով բոլորը կը զարմա-
նային եղելութիւններու առջեւ եւ հասկնալու մէջ կը դժուա-
րանային: Եթէ գիտնային՝ թէ ո՛վ է Ան, թերեւս դարձեալ պի-
տի չհասկնային պատահածները, բայց պիտի չզարմանա-
յին, քանի որ պիտի գիտնային, թէ Անոր համար ամէն ինչ
կարելի է եւ բնական՝ նոյնիսկ եթէ չհասկնային եւ չկարենա-
յին բացատրել պատահածը:



Ասկէ կը հետեւի, թէ՛ կատարուած որեւէ գործի մը իսկա-
կան արժէքը կախում ունի՝ զայն կատարողին ինքնութենէն
եւ ո՛չ թէ ինչպէս կատարուած ըլլալէն:

Ուրեմն Յաւատք եւ Վստահութիւն կարեւոր դեր կը խաղան
եղելութեան հանգամանքին նկատմամբ: Եթէ կատարուա-
ծը՝ իրաւասու, վստահելի եւ հաւատքի արժանացած մէկու
մը կողմէ կատարուած է, որքան որ ալ անիկա չհասկցուի՝
զարմանք չի պատճառէր եւ բնական կը սեպուի:

Այս պատճառով, ահաւասիկ, Յիսուս ամէն մէկ հրաշք կա-
տարելէ առաջ «նախապատրաստական աշխատանք» մը
կը տանէր եւ անկէ վերջ կ'իրականացներ հրաշքը: Առանց
նախապատրաստական շրջանի՝ Յիսուս չէր կատարէր իր
հրաշագործութիւնը:

Ուստի Յիսուս բոլոր ժողովուրդին ներկայութեան, անոնց
առջեւ հինգ հացը օրհնեց եւ հինգ հազարը կերակրեց: Եւ
ըստ Աւետարանի վկայութեան՝ կերակրուողներու թիւը ա-
ւելի քան հինգ հազար էր, առանց համրելու կանանց եւ

երեխաներուն: Մարդկային միտքի եւ իմացականութեան առջեւ իրապէ՛ս անիմանալի երեւոյթ մըն էր ասիկա:

Հո՛ւս, մանրամասնութեան մը պէտք է ուշադրութիւն դարձնել: Յիսուս միայն Փիլիպոսին կը հարցնէ, թէ ո՛ր կէ կարելի է հաց ապահովել, գնել ժողովուրդին համար: Փիլիպոսին այս հարցումը ուղղելը կապակցութիւն ունի՝ անոր Բեթսա-յիդայէն ըլլալուն, քանի որ ան՝ իր բնակավայրին նկատմամբ ճիշդ տեղեկութիւն կ'ունենար: Բայց Զրիստոսին խօսքը՝ առաքելներուն ուղղուած, անելի շատ անոնք փորձելու համար էր՝ տեսնելու, թէ ո՛րքան կը վստահին Իրեն, ա՛յդքան հրաշքներու վկայումբն ետք, արդեօք կը հաւատայի՞ն Իր աստուածային զօրութեան ու կարողութեան, եւ կը հաւատայի՞ն արդեօք, հաստատ համոզուա՞ծ էին, թէ Ինք Յիսուս Զրիստոսն է՝ երկինքէն իջած Աստուծոյ Որդի՞ն: Եւ վերջապէս Յիսուս կը հրամայէ՛, որ հացը եւ ձուկերը Իրեն բերեն:



Եւ Յիսուս հացը եւ ձուկերը իր ձեռքին մէջ առնելով՝ դէպի երկինք կը նայի՝ դէպի Երկնաւոր Զօրը, կ'աղօթէ, կ'օրհնէ զանոնք, կը բաժնէ եւ կու տայ իր աշակերտներուն, որպէսզի անոնք ալ տան ժողովուրդին: Ուրեմն պէտք է ուշադրութիւն դարձնել մի քանի կետի վրայ, մանաւանդ թէ՛ ինչո՞ւ այսպիսի հրաշքով մը ուզեց կերակրել ժողովուրդը:

Նա՛խ, պէտք է գիտնանք, թէ՛ «հրաշք»ը պէտք է ըլլայ՝ «զգալի դէպք», որպէսզի կարելի ըլլայ զգայական փորձառութեամբ հաստատել անոր գոյութիւնը:

«Զգալի դէպք» ըլլալու է հրաշքը՝ որպէսզի իւրաքանչիւր ոք կարողանայ տեսնել, վկայել եւ ըմբռնել՝ այդ զգալի եղելութեան բնական ու սովորական ուժերէն վեր ըլլալը: Հրաշքը նշանակալից դէպք մը ըլլալէ անելի՝ պէտք է ըլլայ «գերբնական», քանի որ այն վեր է բնութեան օրէնքներէն: Աւետա-

րանը կը վկայէ բազմաթիւ հրաշքներու՝ որոնք բնութեան օրէնքներուն չեն համապատասխաներ: Եւ ահաւասիկ, ճիշդ այս կետին է, որ Կէօթէ կ'ըսէ. թէ՛ հրաշքները բնական օրէնքներուն բացառութիւններն են...:

Արդարեւ, բնութեան մէջ կը պատահին բազմաթիւ հրաշալի՛ դէպքեր, երեւոյթներ, որոնք մարդոց կողմէ որպէս հրաշք կը համարուին: Չօր օրինակ, տիեզերքի մէջ տիրող ներդաշնակ կարգ ու կանոնները «հրաշք» երեւոյթներ են: Սակայն անոնք միայն մարդու աչքին հրաշք են, քանի որ այդ բոլորը բնութեան սովորական երեւոյթներու համաձայն «պատճառ-արդիւնք» սկզբունքով կ'իրականանան:

Ուստի՝ բնութեան սովորական երեւոյթները կարելի չէ՛ բառին իսկական իմաստով «հրաշք» անուանել: Բայց Յիսուսի կատարածները, բառին բուն իմաստով «հրաշք» էին, քանի որ բնական եւ սովորական դէպքերէն վեր էին եւ կարելի չէ՛ր բնութեան օրէնքներով եւ «պատճառ-արդիւնք» սկզբունքով բացատրել: Ուստի կարելի է ըսել՝ հրաշքը «արդիւնք» մըն է, որուն պատճառը անյայտ է:

Հրաշքը գերբնական եղելութիւն մըն է, եւ ուրեմն բնական պայմաններու տակ՝ լոկ մարմնական աչքով, մարդկային իմացականութեան սահմաններուն մէջ իմանալ, հասկնալ եւ ըմբռնել կարելի չէ: Հրաշքի մը եղելութեան անդրադառնալու միակ կերպն է՝ հաւատքով մօտենալ անոր:

Բայց ո՛չ երբեք՝ հրամայականոն մտածողութեամբ, այլ՝ բանականութեամբ զօրացած անկեղծ հաւատքով...:

Արդ, հաւատացեալ եւ քրիստոսասէր քոյրեր եւ եղբայրներ հասկնալով հանդերձ մեր մարդկային բնութեան տկարութիւնը, անկարողութիւնը այնուամենայնիւ նորոգուինք, լիցքաւորուինք մեր Տէր Յիսուս Քրիստոսի ստեղծագործ զօրութեամբ եւ կարողութեամբ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից , ամէն:

Օրհնութեամբ՝

ՏԵՐ ԴԱԼԻԹ ԶԱԽԱՆԱՅ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՅՈՂԵԼՈՐ ՅՈՎԻԼ

Au nom du Père et du Fils et du Saint-Esprit, Amen.

**Il leur a répondu et a dit: Donnez-leur vous-mêmes à manger.
(Marc, 6: 37)**

Voici la réponse à Notre Seigneur Jésus-Christ lorsque les disciples ont proposé à Jésus de laisser partir les gens, d'aller dans les villages environnants et de s'acheter de nourriture.

En effet, le pain est l'élément le plus important pour un être humain pour entretenir sa vie et de prolonger sa durée .

La «réalité de la multiplication du pain» dont témoigne l'évangéliste, à première vue, paraît impossible et irréelle à l'homme.

Mais pour comprendre certains phénomènes, les choses doivent être vus à travers les yeux de la foi, d'un point de vue spirituel, pour qu'une personne soit convaincue de sa description "miracle".

Oui, cela semble vraiment "impossible" à ceux qui le voient avec l'œil physique, car comment peut-on nourrir cinq mille personnes avec cinq pains, en bénissant les pains? Et il y a plus, que les «cinq pains» après avoir mangé cinq mille personnes, augmentaient encore, comme en témoigne l'évangéliste.

« Il fit asseoir la foule sur l'herbe, prit les cinq pains et les deux poissons, et, levant les yeux vers le ciel, il rendit grâces. Puis, il rompit les pains et les donna aux disciples, qui les distribuèrent à la foule. Tous mangèrent et furent rassasiés, et l'on emporta douze paniers pleins des morceaux qui restaient. Ceux qui avaient mangé étaient environ cinq mille hommes, sans les femmes et les enfants. »

Comme nous l'avons dit, la "multiplication du pain" est l'un des nombreux miracles accomplis par Jésus-Christ, mais elle se distingue par le simple fait qu'il accomplit des miracles sans avoir de précurseur.

Nous savons aussi qu' avant d'accomplir un miracle, Jésus avait effectué un "travail préparatoire" et avait ensuite accompli le miracle. Sans la période préparatoire, Jésus n'aurait pas accompli son miracle. Rappelons-nous qu'il avait déjà guéri les malades, les paralysés, il avait aussi guéri les yeux des aveugles, et il avait ouvert la langue du muet.

En effet, il existe de nombreux événements et phénomènes merveilleux dans la nature qui sont considérés par les humains comme des miracles. Par exemple, les règles et réglementations harmonieuses dans l'univers sont des phénomènes «miracles». Cependant, ils ne sont qu'un miracle aux yeux de l'homme, car ils sont tous réalisés sur le principe de «cause-effet» selon les phénomènes habituels de la nature.

Le miracle est un phénomène surnaturel, et donc dans des conditions naturelles, uniquement avec l'œil physique, il est impossible de connaître, de comprendre et de comprendre dans les limites de la cognition humaine. La seule façon de réfléchir sur l'occurrence d'un miracle est de l'aborder avec foi.

Mais jamais avec une pensée impérative, mais avec une foi sincère renforcée par la raison....

Maintenant, frères et sœurs croyants et aimant le Christ, tout en réalisant la faiblesse et l'incapacité de notre nature humaine, soyons néanmoins renouvelés, remplis de la puissance créatrice et de la capacité de notre Seigneur Jésus-Christ, maintenant et toujours et pour toujours et à jamais.

Avec mes bénédictions,
Rèv. Père David Margaryan
Prêtre Paroissial



ԿԱՐԵԻՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտեի՞ք թե.-

Ս. Պատարագին պետք է սկիզբէ՞ն մասնակցի, թե՞ կարելի է նաեւ սկսելէն ետք ալ մասնակցի:

Եկեղեցոյ մէջ կատարուող ամէն մէկ խորհուրդի կամ արարողութեան պետք է մասնակցիլ սկիզբէն, քանզի անոնց մէջ երկրորդական հատուածներ չկան, անոնք բոլորն ալ օգտակար են մեր հոգիին համար եւ շաղկապուած են իրարու՝ կազմելով մէկ ամբողջութիւն: Ուստի Պատարագի սրբազան արարողութեան հարկ է մասնակցիլ սկիզբէն: Լաւ, կ'ըլլայ, եթէ Ձեր ձեռքին մէջ ունենաք նաեւ «Պատարագամատոյց»՝ արարողութեան հետեւելու համար:

Կրնա՞մ հաղորդուիլ առանց մեղքերու խոստովանութեան, եթէ նոյնիսկ շատ կը ցանկամ:

Ո՛չ, քանզի առանց մեղքերու անհատական կամ ընդհանրական խոստովանութեան, կարելի չէ մօտենալ Ս. Հաղորդութեան: Հոգեւոր կեանքին մէջ զօրանալու համար նախ անհրաժեշտ է մաքրուիլ մեղքերէն եւ ապա նոր ճաշակել Տիրոջ Մարմինն ու Արիւնը: Այլապէս այդ Ս. Հաղորդութիւնը մեզի համար կը դառնայ ոչ թէ օրհնութիւն, այլ՝ դատապարտութիւն: Ուստի հոգեւոր մաքրութեամբ, ամենայն լրջութեամբ, պատասխանատուութեամբ եւ հաւատքով պետք է Ս. Հաղորդութիւն ստանալ: Յիշենք նաեւ Ս. Պօղոս առաքեալի խրատը այս մասին (տե՛ս Ա Կորնթ. 11.27-32):

Ինչո՞ւ կաթուղիները Ս. Հաղորդութիւն չեն տար մանուկներուն:

Անոնք կը պնդեն, որ դեռ գիտակցութիւն չունեցող մանուկներու պարագային անհրաժեշտութիւն չկայ Ս. Հաղորդութիւն տալու, քանզի այդպիսիները արդէն իսկ կ'ապրին Աստուծոյ շնորհքին ներքոյ: Ս. Հաղորդութիւնը մեր հոգիին սնունդն է, առանց որուն չկրնար ապրիլ քրիստոնեան: Անոր կարիքը ունին բոլորը՝ մանուկէն մինչեւ ծեր: Հետեւաբար՝ անխմաստ է զրկել մանուկները Ս. Հաղորդութենէն, քանզի որեւէ լուրջ պատճառ չկայ: Եթէ կ'ընդունինք մանկամկրտութիւնը, ապա նոյն ձեւով պետք է ընդունինք նաեւ Ս. Հաղորդութիւն տալը: Յիսուս Իր Մարմինն ու Արիւնը ճաշակելու համար տարիքային սահմանափակում չսահմանեց. «**Թո՛յլ տուէք մանուկներուն եւ մի՛ արգիլէք, որ անոնք Ինձ մօտ գան, քանզի այդպիսիներուն է երկինքի արքայութիւնը**» (Մատթ. 19.14):

ԱՐՈԹՔ

ՅԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ



ԱՐՈԹՔ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

Քու խաղաղութիւնովդ,
ով Զրիստոս Փրկիչ մեր,
որ մտքէ ու խելքէ շատ վեր է,
ամուր եւ անվախ պահէ զմեզ ամէն չարութենէ:
հաւասարէ զմեզ թու ճշմարիտ երկրպագուներուդ հետ,
որք հոգով եւ ճշմարտութեամբ
քեզ երկրպագողութիւն կ'ընեն.
Վասն զի Ամենասուրբ երրորդութեանդ
կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ.
այժմ եւ միշտ, յաւիտեանս մինչեւ յաւիտեան.
Ամէն:

PRIÈRE POUR LA PAIX

Christ, notre Sauveur,
dans ta paix qui dépasse toutes pensées et paroles,
fortifie-nous et garde-nous sans peur devant tout mal;
mets-nous auran de tes vrais adorateurs,
qui t'adorent en esprit et en vérité,
car à la très Sainte Trinité
conviennent la gloire, la souveraineté et l'honneur,
maintenant et toujours et pour l'éternité de l'éternité.
Béni soit notre Seigneur, Jésus-Christ.
Amen.

Շաբթուայ խորհրդածուփիւններ

«Աշխարհի մեջ մարդիկ կան, որոնք կ'ապրին միայն իրենց համար, մարդիկ կան, որոնք կ'ապրին ուրիշներուն համար, մարդիկ ալ կան, որոնք կ'ապրին տանջուողներուն օգնելու համար: Եւ, աւա՛ղ, ամենէն քիչը միայն անոնք են աշխարհի մեջ»:

Յովհաննէս Թումանեան

Աշխատանքը այն հանճարն է, որ աշխարհիս տգեղութիւնը գեղեցկութեան կը փոխէ: Աշխատանքն է, որ մեծ անէծքը կը փոխէ մեծ օրհնութեան: Այսուհետեւ աշխարհիս տերերը աշխատանքն ու գիտութիւնն են:

Մեր առաջին պարտականութիւնը աշխատանքն է,
երկրորդը՝ բարութիւնը:
Ֆրանսիսք Սարսէ

Աշխատանքի պարգեւին, վարձատրութիւնը ոչ թէ հանգիստն է, այլ աւելի շատ աշխատանքը:
Ծուլութիւնը կրնայ հրապուրիչ թուայ, սակայն
աշխատանքն է, որ բաւարարուածութիւն,
գոհութիւն կու տայ:
Աննէ Ֆրանկ

Երեւակայութիւնը աւելի կարելոր է, քան գիտելիքները:
Գիտելիքները սահմանափակ են, երեւակայութիւնը՝
անսահման:
Ալպերթ Այնշթայն

Եթէ կը ցանկաք երջանիկ ապրիլ, ապա պէտք է կապուած
ըլլաք ձեր նպատակներուն եւ ոչ թէ՛ մարդոց եւ իրերուն:
Ալպերթ Այնշթայն

Մի ձգտիք հասնիլ յաջողութեան, ձգտեք, որ ձեր կեանքը
իմաստ ունենայ:
Ալպերթ Այնշթայն

ՆՈՒԻՐԱՏՈՒՌՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

DON
À L'ÉGLISE



DONATION
FOR THE CHURCH

**Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, QC
Donations of August/September have been received with great appreciation
2020**

CHURCH:

Anonymous \$100
Mr. Noubar Babikian \$100

RENOVATION FUND:

Mr. & Mrs. Robert & Zarouhi Kechayan \$100

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE ANAHID ESSERIAN-SAHAGUIAN:

Miss Adrine Sahaguian \$250

Mr. & Mrs. Barkev & Arpi Nazaretian \$250

Mr. Boghos Sahaguian \$200

Mr. Robert Cotchikian \$100

Mr. & Mrs. Michael & Victoria Swenson \$100

Mrs. Koharig Ganimian & Family \$100

Dr. & Mrs. Vagharash Ehramdjian \$100

Mr. & Mrs. Varoujan & Marie Ehramdjian \$100

Mr. & Mrs. Vahan & Maral Paloulian \$50

Mrs. Hourig Torossian \$50

Mrs. Sylvia, Nairy, & Lucie Sahaguian \$50

Mr. Ara Balian \$50

Ms Chouchanik Suzy Piliguian \$50

Mr. & Mrs. Vazken & Haiganoush Kesserian \$50

Mr. & Mrs. Vahe Balayan \$50

Mr. & Mrs. Serge & Araks Kalloukian \$20

HOKEHANKISD

(REQUIEM SERVICES)

IN MEMORY OF:

THE LATE MANOUK & ALICE DAKESSIAN:

Mr. & Mrs. Harout Dakessian \$100

THE LATE VAHAN SONMEZ:

Mr. Aret Sonmez \$300

Mr. & Mrs. Robert Sert \$100

Mr. & Mrs. Hratch Mouradian \$60

Mr. Raffi Migdesyan \$50

THE LATE CHAKE DER TATEOSSIAN:

Mr. & Mrs. Garbis & Hasmig Aposhian \$50

THE LATE DERKEVORKIAN & ANGALADIAN FAMILIES:

Dr. & Mrs. Hrair & Manoush Derkevorkian \$200

THE LATE DN. ONNIG KALOUSTIAN:

Mrs. Emma Kaloustian \$100

THE LATE JEAN DERTADIAN:

Mrs. Dirouhi Dertadian \$100

THE LATE SYLVA MEKHGEAVAKIAN:

Mrs. Kelly Kelleher \$150

ՄՐՏԱԲՈՒԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի ՆՊԱՍ

ՄԵՐ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՊԱՅՅՈՒՈՒԹԵԱՆ

Գիտակցելով այս օրերու դժուարությունները, համեստորեն կը խնդրենք մեր սիրալիր հաւատացեալներէն, կատարել իրենց սրտաբուխ նուիրատուութիւնները ի նպաստ Ս. Եկեղեցւոյ առաքելութեան նաեւ՝ հետեւեալ միջոցներով՝



այցելելով Եկեղեցւոյ կայքէջը

Website - Saintgregory.ca

Շնորհակալութիւն

YOUR HEARTFELT DONATIONS

FOR THE SUPPORT OF OUR CHURCH:

Concerning the difficulties that we are facing to those days; we humbly ask our parishioners to remember St. Gregory the Illuminator Armenian Cathedral for the glory of our Church.

Your donations can also be made through the

Church website – saintgregory.ca by:



Thank You!

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԿԻՐԱԿԻ, 6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020



Առաջնորդ սրբազան հոր թելադրանքով
հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Գանատահայոց
Առաջնորդարանի յարակից մարմիններէն՝
Արարատ ճամբարի 2003-2014 տարեշրջաններու
Երիտասարդական Ծրագրի
հիմնադիրներէն՝

ՀԻԼՏԱ

**ԿՕԶՊԱԶ ՍԱԶԱԼՕՂՆՈՒԻ
(HILDA GOZBAK SAKALUGLU)**

(մահացած Թորոնթօն)
հոգւորն ի հանգիստ:



Տօթթ. Հրայր Եւ Տիկ. Մանուշ ՏԵՐ ԳԵՐՈՂԵԱՆԻ
Տ. Եւ Տիկ. Արա Եւ Անի ՏԵՐ ԳԵՐՈՂԵԱՆԻ
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի իրենց սիրեցեալ մօր՝

**ԳՈՀԱՐ ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆԻ
(KOHAR DERKEVORKIAN)**

Մահուան 22-րդ տարելիցին առիթով
իրենց սիրեցեալ հօր՝

**ՏՕԶԹ. ԳՐԻԳՈՐ
ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆԻ**

(DR. KRIKOR DERKEVORKIAN)

Մահուան 37-րդ տարելիցին առիթով
իրենց սիրեցեալ մեծ մօր՝

**ՓԱՌԻԿ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ
(PARIG DIKRANIAN)**

Մահուան 47-րդ տարելիցին առիթով
ինչպէս նաեւ՝

իրենց սիրեցեալ հօրեղբօր զակին՝

**ՆՈՐԱՅՐ (ՊՕՊ)
ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆԻ
(NORAIR (BOB) DERKEVORKIAN)**

Մահուան 15-րդ տարելիցին առիթով:



Տօթթ. ԵՆ Տիկ. Հրայր ԵՆ Մանուշ ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆԻ
հնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի

կը խնդրեն իրենց սիրեցեալ մօր՝

**ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԱՆԿԱԼԱԹԵԱՆԻ
(DIKRANOUHIE ANGALATIAN)**

Մահուան 6-րդ տարելիցին առիթով

իրենց սիրեցեալ եղբօր՝

**ՅԱԿՈՐ ԱՆԿԱԼԱԹԵԱՆԻ
(HAGOP ANGALADIAN)**

Մահուան 11-րդ տարելիցին առիթով

իրենց սիրեցեալ մօրաքրոջ՝

**ՌԵԴԵՔԸ ՊՈՅԱԾԵԱՆԻ
(REBECCA BOYADJIAN)**

Մահուան 12-րդ տարելիցին առիթով

իրենց սիրեցեալ հօր՝

**ՕՆՆԻԿ ԱՆԿԱԼԱԹԵԱՆԻ
(ONNIK ANGALATIAN)**

Մահուան 15-րդ տարելիցին առիթով

Ինչպէս նաեւ՝

**ԱՆԿԱԼԱԹԵԱՆ ԵՐ ՊՈՅԱԾԵԱՆ
(ANGALATIAN & BOYADJIAN)**

Գերդաստաններու համայն ննջեցելոց

հոգիներուն ի հանգիստ



Տիկ. Տիրուհի Տրդատեանի

Տիկ. Էմմա Գալուստեանի

Տիկ. Հէլէն Մելքոնեան Գալայճեանի

հնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի

իրենց սիրեցեալ հարազատներուն՝

**ԺԱՆ ՏՐԴԱՏԵԱՆԻ
(JEAN DERTADIAN)**

Մահուան 2-րդ տարելիցին առիթով:

Ինչպէս նաեւ՝

ՕՆՆԻԿ ՍՐԿ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ

(DN. ONNIK KALOUSTIAN)

Մահուան 7-րդ տարելիցին առիթով:

ՏԻԳՐԱՆ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ

(DIKRAN KALAYJIAN)

Մահուան 21-րդ տարելիցին առիթով:

ԻՆՉԱԿԵ ՆԱԵՆ՝

ԳԱԼԱՅՃԵԱՆ, ԳԱԼՈՒԲՏԵԱՆ, ՏՐԴԱՏԵԱՆ,

ՊԱՐՈՆԻՔ, ԿԵՕՆՃԵԱՆ, ՄԵԼՔՈՆԵԱՆ

ԵՒ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ

Գերդաստաններու համայն ննջեցելոց

հոգիներուն ի հանգիստ:



Տիկ. Սիլվա Գարաթղյանեանի
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի

իւր սիրեցեալ ընկերոջ՝

ԱՔՐԱՀԱՄ ՉՈՒՊԻԿԵԱՆԻ

(APRAHAM ZOUBIGIAN)

(մահացած Հայէպ)

Մահուան 40-ին առիթով:



ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ԱՂՕԹՔ

Քրիստոս որդի Աստուծոյ անխիակալ եւ բարեգութ,

գթա քո արարչական սիրովդ

ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց:

Յիշեալ յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ:

Արա արժանի ողորմութեան քաւութեան

եւ թողութեան մեղաց:

Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո

յաջակողմեան դասուն:

Չի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն.

դատաւոր կենդանեաց եւ մեռելոց:

Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւնս եւ պատիւ.

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանց յաւիտենից, ամէն:



Faire un don



LE FONDS D'AIDE AUX SINISTRES DE L'EXPLOSION DE BEYROUTH

Frères et sœurs Bien-aimés en Christ,

C'est avec une profonde douleur et une immense tristesse que nous avons appris hier, le mardi 4 août 2020, l'explosion massive qui a secoué la Capitale libanaise, Beyrouth, emportant la vie de plus d'une centaine de personnes, et causant des pertes considérables et dévastatrices.

En cette période difficile, le peuple libanais, ainsi que la communauté arménienne ont besoin de nos prières et de notre soutien.

Pour répondre à la crise humanitaire en cours, causée par l'explosion, Sa Grâce l'Évêque Abgar Hovakimyan, le Primat, invite nos frères et sœurs bien-aimés en Christ à prier pour le repos des âmes des victimes innocentes et pour le prompt rétablissement des blessés.

Veuillez envisager de participer au service spécial de prière et de requiem qui aura lieu ce dimanche le 9 août 2020 dans toutes les Églises apostoliques arméniennes du Canada.

A cette occasion, le Diocèse a créé le fonds d'aide aux sinistres de l'explosion de Beyrouth. Vous êtes tous invités à faire des dons au Diocèse ou à la Paroisse locale. Ces dons seront versés aux familles des innocentes victimes par le biais du Saint-Siège d'Etchmiadzine.

Que Notre Seigneur garde le Liban sous sa protection divine aujourd'hui et pour toujours. Amen!

Faire un don



Յոգեւոր Յովիւի Այցելութիւններ Վերապահումով

Մեր հաւատացեալներուն կը յայտնենք թէ Նկատի ունենալով համաճարակի այս արտասովոր պայմանները, սակայն անոնք որոնք կը փափաքին Տէր Յօր այցելութիւնը հիւանդանոցի, տնօրինէքի կամ այլ ընտանեկան հիւանդ պարագայի մը համար, կրնան դիմել Եկեղեցւոյ գրասենեակ հեռաձայնելով (514) 279-3066 :

Յոգեւոր հովիւը իր այցելութիւնը պիտի կատարէ ձեռք առնելով համաճարակին պատճառով ծրագրուած ապահովական եւ առողջապահական բոլոր միջոցները, հետեւելով ԶԷպէք Նահանգի Covid-19 **համաճարակի** ուղեցոյցի ցուցմունքներուն:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Visites du curé de la paroisse avec précaution

Compte tenu des circonstances inhabituelles de la pandémie, nous avons le plaisir de vous informer que des visites avec notre curé sont toujours disponibles. Ceux qui souhaitent la bénédiction à la maison, l'hôpital ou une visite avec le curé de la paroisse pour la prière pour un membre de la famille malade peuvent contacter le bureau de l'église au (514) 279-3066.

Le curé de la paroisse effectuera ses visites en prenant toutes les mesures de santé et de sécurité nécessaires selon les directives de la province de Québec pendant la pandémie COVID-19.


BUREAU DE L'ÉGLISE

Parish Priest's Visits with Precaution

Given the pandemic's unusual circumstances, we are pleased to inform you that visits with our parish priest are still available. Those who wish the visit of our parish priest at a hospital, for home blessing or prayer for an ailing family member may contact the church office at (514) 279-3066.

The Parish Priest will make his visits by taking all necessary health and safety measures following the province of Quebec's guidelines during the COVID-19 pandemic.

CHURCH OFFICE



ՏՕԼԱՑՈՅՑ
ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱԼ
ՍԵՊՏԵՄԲԵՐ – SEPTEMBRE

7, Երկուշաբթի – Ա. օր Խաչի պահոց:
Lundi 7 – 1^{er} jour du jeûne de la Ste Croix.

8, Երեքշաբթի – Բ. օր Խաչի պահոց:
Mardi 8 – 2^{ème} jour du jeûne de la Ste Croix.

9, Չորեքշաբթի – Գ. օր Խաչի պահոց:
Mercredi 9 – 3^{ème} jour du jeûne de la Ste Croix.

10, Հինգշաբթի – Դ. օր Խաչի պահոց:
Jeudi 10 – 4^{ème} jour du jeûne de la Ste Croix.

11, Ուրբաթ – Ե. օր Խաչի պահոց:
Vendredi 11 – 5^{ème} jour du jeûne de la Ste Croix.

12, Շաբաթ – Տօն Սրբոյ Եկեղեցւոյ ի Նաւակատիս
Սրբոյ Խաչին:

Samedi 12 – Fête de la Ste Église,
veille de la Ste Croix.



SOL

ԽԱԶՎԵՐԱՅ

FÊTE MAJEURE DE L'EXALTATION
DE LA SAINTE CROIX



ՏԱՐԱԽԱՐ ՏՕՆԻ Ա. ՊԱՏԱՐԱԳ
LA SAINTE MESSE DE LA FÊTE MAJEURE

Կիրակի, 13 Սեպտեմբեր 2020
Dimanche, 13 Septembre 2020

Ուղիղ հեռարձակում – Facebook Live
Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

**Առաւօտեան ժամերգութիւն /
Matines à 09:30**

Ա. Պատարագ / Sainte Messe 10:30
**Ռեհանի օրհնութիւն / Bénédiction de
le basilic
12 -12 :30**

Պատարագի եւ ջարդի

ԱՐԺ. Տ. ԴԱԻԴ ԶՐԵՅ. ՍԱՐԳՍԵՄ
ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻԻ

CÉLÉBRATION ET L'HOMÉLIE

RÈV. PÈRE DAVID MARGARYAN
PRÊTRE PAROISSIAL

Յաւարտ Ա. Պատարագի
ՄԱՏԱՐՕՐԳՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՎԵՏՈՒՄ
Եկեղեցւոյ բակին մէջ:
BÉNÉDICTION MADAGH ET DISTRIBUTION
Dans la cour de l'Église
**ԽԱՄՐԵՆԻ, ԱՆՈՒԵՆԵՆԻ ԵՒ
ՅՈՒԵԱՌԻՐԵՆԻՈՒ Կանաք**

Այնպէս – աղի խմորեղեններու տեսակներ,
Կարկանդակներ - Պանիրով Պետեկներ,
Զետեկներ եւ. Անուշեն:

Կազմակերպութեամբ՝ Եփական
Խորհուրդի անդամներուն եւ Տիկնանց
Յանձնախումբին:

VENTES DE PÂTISSERIE ET SOUVENIRS

Organisé par des membres Conseil Paroissial
et des dames auxiliaires de l'église.
Atchma, gateaux, pâtes avec fromage,
cheoregs et confitures.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 /

Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008

stgregorychurch@gmail.com



Saint Gregory Armenian Apostolic Church
Of Montreal

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՍԱՅՐ ՏԱՃԱՐ
SAINT GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

Ուղիղ հեռարձակում /Diffusion en direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ՕՐ ՄԵՌԵԼՈՑ
ՀԱՍՐԵԼ ՆՆՁԵՑԵԼՈՑ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱԼ ՕՐ
REMEMBRANCE DAY OF THE DEAD

Կիրակի, 13 Սեպտեմբեր 2020 Խաչվերացի
տաղաւար տօնն է, Եւ այս առիթով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի տօնին յաջորդող օրը
ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ

Երկուշաբթի, 14 Սեպտեմբեր 2020
առաւօտեան ժամը 11:00-ին:

Հաւատացեալներ, որոնք կը փափաքին հոգեհանգստեան պաշտօն խնդրել
Եւ մասնակցիլ Երկուշաբթի ննջեցելոց յիշատակութեան օրուան առիթով
կրնան դիմել Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066:

On Sunday, September 13, 2020, is a major feast of the
Exaltation of the Holy Cross, and on this occasion the requiem services
will be held on the

REMEMBRANCE DAY OF THE DEAD
MERELOTZ - REQUIEM SERVICES

Monday, September 14, 2020, at 11:00 AM

Our parishioners who wish to schedule a requiem service for
Monday Remembrance Day of the Dead (Merelotz) can contact
the Church office at (514)279-3066.



ՄՈՆՏՐԵԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL OF
MONTREAL

**ՎԵՐԱՄՈՒՏ
ԵՒ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ**



Սուրբ Եւ Ամմահ
Պատարագ
Կիրակի, 20 Սեպտեմբեր 2020

Յաւարտ Ս. Պատարագի
Օրհնութեան Կարգ
Ուսումնական Տարեշրջանի
Ժամը 12:30-ին

Սիրով կը հրաւիրենք բոլոր աշակերտները,
ուսանողներն ու կրթական մշակները
օրհնութիւն ստանալու,
խաղաղութեամբ եւ յաջողութեամբ վերսկսելու
ուսումնական տարեշրջանը:

**Բարի եւ հեգասահ տարեշրջան կը մաղթենք
մեր բոլոր աշակերտ-ուսանողներուն
եւ ուսուցիչներուն:**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
stgregorychurch@gmail.com



ԱՄԵՆԱՄԵԱՅ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ հեռարձակում – En direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Շաբաթ, 26 Սեպտեմբեր 2020

Ժամերգութիւն - երեկոյեան ժամը՝ 5-ին:

**«Ուստի կը յայտարարեմ ձեզի. “Ինչ որ կը խնդրէք աղօթքով,
հաւատացէ՛ք թէ պիտի ստանաք, ու պիտի ըլլայ ձեզի”
(Ղուկ. 11:24):**

Samedi, le 26 Septembre 2020

Office du soir à 17h00.

**“C'est pourquoi je vous dis : tout ce que vous demandez en priant,
croyez que vous le recevrez, et il vous sera fait”
(Marc 11 :24).**



ՄԱՂԹԱՆՔ ԶԱՆՐԱԴԴԵՏԱԿԱՆ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 29-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

Ուղիղ հեռարձակում – En direct

 Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ԶԱՆԴԻՍԱԴԵՏՈՒԹԵԱՄԲ՝
ԳԵՐՇ. Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ
Առաջնորդ Գանատահայոց Թեմին



Յաւարտ Ս. Եւ Ամմահ Պատարագի

ՄԱՂԹԱՆՔ ԶԱՆՐԱԴԴԵՏԱԿԱՆ Կիրակի, 27 Սեպտեմբեր 2020

Առաւօտեան Ժամերգութիւն	09:30
Սուրբ Պատարագ	10:30
Հոգեհանգստեան Պաշտօն	12:15
Հանրապետական Մաղթանք	12:30

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:
(514)279-8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՅԻՇԵՑՈՒՄ - ԿԱՅԱԼԱՏԵՐԻ

Մեր սիրելի հաւատացեալներու ուշադրութեան՝

Outremont-ի քաղաքապետարանի
կանոններուն համաձայն

1 Օգոստոս 2020-էն՝ սկսեալ պիտի վերսկսի
կիրարկուիլ կայանատեղիի համար նշանակուած
երկու ժամ տեւողութեամբ դրութիւնը:

Ուստի, կը խնդրենք մեր հաւատացեալներէն շաբթուայ
ընթացքին նկատի ունենալ երկու ժամ տեւողութեամբ
կայանատեղիի արտօսութեան ժամկետը, իսկ Կիրակի
օրերուն կրնան օգտագործել դպրոցի կայանատեղին:

Դպրոցին մանրամասնութիւնները կը գտնուի կից
յայտարարութեան մէջ:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆՏԱԿ

NOTE - PARKING

Attention to our beloved faithful:
According to Outremont City Rules

Starting from **August 1, 2020**, a two-hour permitted time
for the parking lot will resume.

However, we ask our faithful to consider appointed two-hour
duration time permitted for the parking during weekdays, and
on Sundays, the mentioned school parking is usable.

Details for the school can be found in the attached
announcement below.

CHURCH OFFICE



**ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ
ԱՌԱԶՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ**

**CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GREGOIRE L'ILLUMINEUR
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչև կ.է. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2